



«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸԹՆԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության
գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Բաղայան Նինել Սուրիկի

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ

քաղաքի հ.4 հիմնական դպրոց

Արտաշատ 2023

Թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,
կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Հարցերը՝

1. Ինչպե՞ս են բնապահպանական տարբեր հիմնախնդիրները ազդում մեր ժամանակների հասարակության վրա:
2. Ինչպե՞ս կարելի է իրականացնել բնապահպանական կրթությունը <<Քիմիա>> առարկայի դասաժամերին:

Նպատակները՝

1. Ուսումնասիրել բնապահպանական հիմնախնդիրների ազդեցությունը հասարակության վրա:
2. Պարզաբանել դպրոցական երեխաների շրջանում բնապահպանական խնդիրների իմացությունը:
3. Որքանով է քիմիա առարկան նպաստում բնապահպանական կրթությանը և դաստիարակությանը դպրոցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.....	5
1.1 Բնապահպանության ընդհանուր բնութագիրն ու առկա հիմնախնդիրները	5
ԳԼՈՒԽ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՊՐՈՅԸ.....	11
2.1 Բնապահպանական դաստիարակությունը և կրթության դպրոցում	11
2.2 Բնապահպանական հիմնախնդիրների լուծման ուղիները <<Քիմիա>> առարկայի շրջանակներում	14
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	16
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ	17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդը բնության մի մասնիկն է, և առանց բնության չի կարող ապրել:

Բնությունը-տիեզերքն է՝ իր բազմաբնույթ դրսևորումներով, որում ամեն բան սերտորեն կապված են միմյանց:

Բնությունը մարդուն տալիս է սնունդ, օդ, ջուր, լցնում նրան կենսատու ուժով, ապահովում այն ամենը ինչ անհրաժեշտ է հարմարավետ կյանքի համար, և մարդն էլ իր հերթին պետք է ուշադրություն դարձնի նրա մաքրությանն ու պահպանմանը: Մարդը պետք է գիտակցի, որ վնասելով բնությունը, վնասում է ինքն իրեն, քանի որ ցանկացած սխալ մոտեցում հանգեցնում է անդառնալի կորստի: Եվ մարդը՝ լինելով բանականությամբ օժտված էակ, պետք է նպաստի նրա ներդաշնակ զարգացմանը, քանզի եթե չպահպանվի շրջակա միջավայրը, չգնահատվի նրա արժեքը, ապա հենց ինքը՝ բնությունը կպատժի նրան: Ինչպես ասել է Յոհան Գյոթեն, բնությունը կատակներ չի ճանաչում, այն միշտ ճիշտ է, միշտ լուրջ, միշտ խիստ: Միալներն ու թյուրիմացությունները գալիս են մարդուց:

Մեր ժամանակներում սկսել է գիտությունը վերելք ապրել և այն ինչ ունի բնությունը, կարծես արդեն տեխնիկայի միջոցով կարողանում են կրկնօրինակել, սակայն ավելի անբնական և արհեստական տեսքով:

Մարդը գոյատևում և ապրում է իր հասարակական առաջընթացը՝ օգտվելով բնության բարիքներից: Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ Երկիր մոլորակի բնապահպանության և բնօգտագործման վերաբերյալ:

Պահպանել բնությունը նշանակում է պահպանել կյանքը:

Աշխարհի նկատմամբ բնապահպանական վերաբերմունքը ձևավորվում է մարդու ողջ կյանքի ընթացքում: Բնությունը մարդուն հարստացնում է հոգեպես: Նրա հետ շփումը նպաստում է բարոյական, դրական որակների ձևավորմանը:

Միշտ էլ եղել է անհրաժեշտություն շրջակա միջավայրի պահպանության,

բարելավված և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման ուղղությամբ աշխատանքներ տանելուն:

Բնապահպանական խնդիրներն արդիական են և շատ կարևոր:

Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին: Բնության, շրջակա միջավայրի պահպանությունը ոչ միայն պետության, այլև անհատի պարտականությունն է:

Բնության նկատմամբ սերն ու հոգածությունը սկսվում է մանկուց՝ նախադպրոցական տարիներին և ամրապնդվում է դպրոցում՝ պատանեկության տարիներին: Հենց այս նպատակին էլ ծառայում են բնության պահպանմանը նվիրված դպրոցական միջոցառումները:

Մարդուն դեպի մարդ տանելու ամենախմաստուն ճանապարհը բնությունն է: Բնապահպանությունը սեր է դեպի բնությունը: Բնության նկատմամբ սիրո այդ արտահայտությունն սկսվում է դպրոցում բույսերի, թռչունների, կենդանիների նկատմամբ ցուցաբերած սիրով և հոգատարությամբ:

Բնապահպանական խնդիրների լուծման հարցում կարևորվում է դպրոցի և կրթության դերն ու նշանակությունը: Այդ նպատակի իրագործման համար մեր առջև դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ Ներկայացնել բնապահպանության ընդհանուր բնութագիրն ու առկա հիմնախնդիրները,
- ✓ Ներկայացնել դպրոցի դերը բնապահպանության կրթության իրականացման հարցում,
- ✓ Ներկայացնել բնապահպանության խնդրի դիտարկումը դպրոցում <<Քիմիա>> առարկայի շրջանակներում:

ԳԼՈՒԽ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

1.1 Բնապահպանության ընդհանուր բնութագիրն ու առկա հիմնախնդիրները

Բնապահպանությունը Երկիր մոլորակի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման և բնականոն օգտագործման չափերի ամբողջությունն է, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, ընդերքի հարստությունը, ջրերի և մթնոլորտային օդի մաքրությունը:

Այսօր մարդկության ամենամեծ տնտեսկան սպառնալիքը բնությունն արժեվորելու մեր անկարողությունն է:

Մենք ապրում ենք <<փոքր տիեզերքի մեծ մոլորակում>>, որտեղ տնտեսությունը բացառիկ ճնշում է գործադրում Երկիր մոլորակի վրա: Ամենը՝ ներառյալ կենսաբազմազանությունը, քաղցրահամ ջրերը, մթնոլորտը, օվկիանոսները, անտառները, սառցե ժայռերը և այլն, անմիջապես դեր ունեն Երկիր մոլորակի և, հոտնաբար, համաշխարհային տնտեսության կայուն զարգացման գործում:

Մարդկության կողմից բնության անխնա և անխիղճ օգտագործման առաջին պատասխան ազդակները նկատվել են դեռևս 1980-ական թթ.-ին (օգոնային շերտի բարակում, ջերմային ալիքների տեղաշարժ, փոթորիկների ակտիվացում, սառույցների հալման արագացում, քաղցրահամ ջրերի պակաս և այլ):

Ներկայումս տնտեսական աճն ուղեկցվում է սահամանափակ բնական ռեսուրսների անխնա օգտագործմամբ, և որպես արդյունք՝ բնական աղետի ռիսկի աճով:

Գիտության ու տեխնիկայի բուռն զարգացման, ազգաբնակչության նյութական, հոգևոր և գեղագիտական պահանջների անընդհատ աճի ու բարելավման արդի պայմաններում շրջապատող միջավայրի պահպանման ու բնական պաշարների

Ճիշտ օգտագործման խնդիրը ձեռք է բերել կարևորագույն նշանակություն:

Բնության պահպանության հարցերը միշտ էլ եղել մարդու ուշադրության կենտրոնում և սերտ կապի մեջ են գտնվել բնական ռեսուրսների օգտագործման մաշտաբների, մեթոդների, տեխնիկայի զարգացման մակարդակի, ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերի և մարդու տնտեսական գործունեության մի շարք այլ հարցերի հետ: Ինչ խոսք, որ բոլոր դեպքերում էլ բնական ռեսուրսներ՝ մասնավորապես առանձին կենդանիների, բույսերի և թռչունների պահպանության անհրաժեշտությունը բխում է վերջիններիս չափից ավելի օգտագործումից և նրանց քանակի խիստ նվազեցումից:

Այնուամենայնիվ, այն, ինչ տեղի է ունեցել անցյալում, չի կարող համեմատվել ժամանակակից դարաշրջանում հասարակության և բնության փոխազդեցության մեջ ծագած հակասությունների հետ: Շատ հազարամյակներ մարդիկ սպառում են բնական պաշարները՝ չգիտակցելով, որ բնության հնարավորությունները սահմանափակ են, շատ հազարամյակներ շարունակ մարդիկ ապրել են առանց կասկածելու, որ կգա մի օր, երբ դժվար կլինի շնչել, ջուր խմել, ինչ-որ բան աճեցնել երկրի վրա, քանի որ օդը աղտոտված է, ջուրը՝ թունավորված, հողը՝ աղտոտված:

Մարդն իր գործունեությամբ ակտիվորեն ազդում է շրջապատող բնական միջավայրի վրա, և այդ ազդեցությունը կարող է ունենալ թե՛ դրական, և թե՛ բացասական հետևանքներ:

Չորացվել և օգտագործվել են միլիոնավոր հեկտար ճահիճներ և գերխոնավ հողատարածություններ, զգալի քանակով անապատներ, ձորեր ու լեռնալանջեր կանաչապատվել ու անտառապատվել են, քաղաքներում, գյուղերում ու ավաններում ստեղծվել են անտառագոտիներ: Մթնոլորտը խիստ աղտոտող ածխի, մագնիզիումի ու նավթի փոխարեն ներկայումս օգտագործում են գազ, էլեկտրականություն ու էներգիայի այլ աղբյուրներ: Ժողտնտեսության մեջ լայնորեն օգտագործվում է ատոմային էներգիան: Բնական շատ նյութեր փոխարինվում են արհեստականներով: Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող

միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու շրջապատող միջավայրի պահպանության պայմանները: Վտանգավոր կարող են լինել էներգետիկայի և մշակող շատ ճյուղերի օբյեկտները, գյուղատնտեսության քիմիացումը, ավտոմոբիլային, ջրային և օդային տրանսպորտի աճը: Բազմաթիվ երկրներ խմելու ջուր չլինելու պատճառով սառցալեռներ են տեղափոխում Գրենլանդիայից: Միաժամանակ ջրային աղբյուրներն ու Համաշխարհային օվկիանոսն աղտոտվում են թափոններով: Կարևոր է նաև մթնոլորտի մաքրության և պահպանման խնդիրը:

Արդյունաբերական արտադրության աճող ծավալները, քիմիական նյութերի տարածվածությունը ողջ աշխարհում, հակումը ցրվելու նկատմամբ, բերում է նրան, որ տեղի է ունենում կենսոլորտի քիմիական բաղադրության փոփոխություն, որը վատթարացնում է կենդանիների, բույսերի և մարդկանց գոյությունը:

Ամեն տարի այրվում են համարյա մեկ միլիարդ տոննա պայմանական վառելիք և մթնոլորտ են արտանետվում միլիոնավոր տոննա ծծմբի, ածխածնի, ազոտի օքսիդներ, որոնց մի մասը հետ է վերադառնում թթվային անձրևների, մրի, մոխրի, փոշու տեսքով: Հողն ու ջուրը աղտոտվում են արդյունաբերական և կենցաղայի հոսքերի, նավթամթերքների, պարարտանյութերի, պեստիցիդների, ծանր մետաղների, ռադիոակտիվ թափոնների միջոցով: Առկա է Երկրի օզոնային շերտի քայքայման վտանգ: Մթնոլորտի ինքնամաքման կարևորությունն արդեն մոտ է սահմանին:

Մթնոլորտում ածխածնի երկօքսիդի ավելացումը ջերմոցային էֆեկտի շնորհիվ խորացնում է օդի և Երկրի մակերևույթի ջերմաստիճանի բարցրացման վտանգը: Աշխարհի խոշոր շատ քաղաքներում օդը վտանգավոր է դարձել մարդու առողջության համար: Զգալի վնաս է հասցվել բուսական և կենդանական աշխարհին: Արժեքավոր կենդանիների շատ տեսակներ գտնվում են անհետացման շեմին և գրանցված են <<Կարմիր գրքում>>:

Բնապահպանական դաժան աղետների ներկա պայմաններում, որոնց

հաղթահարումը միայն կարող է ապահովել մարդկային կյանքը երկրագնդի վրա, մարդու բարոյական կրթության ու դաստիարակության հիմքն առաջին հերթին դառնում է մարդու և մարդու, մարդու և բնության միջև առկա փոխհարաբերությունների սկզբունքների մշակումը:

Բնության պահպանության հիմնախնդիրն ընդգրկել է ամբողջ Երկիր մոլորակը և գնալով ավելի է սրվում, անհրաժեշտություն է դարձել տարբեր երկրների ջանքերի միավորումը՝ բնապահպանական միջազգային կազմակերպությունների ստեղծումը: Ներկայումս գործում են ավելի քան 300 միջազգային բնապահպանական կազմակերպություններ, որոնք միավորում են բնության պահպանության որոշակի բնագավառի մասնագետների և շահագրգիռ անձանց:

Քսաներորդ դարի վերջը, որը կոչվում է միջուկային, տիեզերական, տեղեկատվական դարաշրջան, էլեկտրոնիկայի դարաշրջան, իր ամենամեծ տեխնոլոգիական նվաճումների հետ մեկտեղ, Երկրի ժողովրդին բերեց գլոբալ բնապահպանական ճգնաժամի սպառնալիք, որը կարող է ոչնչացնել ոչ միայն մարդկային քաղաքակրթությունը, այլև կյանքն ինքնին մոլորակի վրա:

Մարդկության գլոբալ խնդիրները դարձել են սոցիալական, բնական և հումանիտար գիտություններին վերաբերող միջառարկայական հետազոտությունների կարևոր օբյեկտ: Մարդկության գլոբալ խնդիրներից, որտեղ առկա են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խաղաղությունը պահպանելու, նոր համաշխարհային պատերազմը կանխելու և զինաթափման, էներգիայի, հումքի, սննդի և Համաշխարհային օվկիանոսի խաղաղ օգտագործման խնդիրները, բնապահպանական խնդիրները հատուկ տեղ են գրավում:

Ըստ ռիսկի աստիճանի՝ գիտնականները բնապահպանական խնդիրները բաժանել են հետևյալ կերպ.

- Գլոբալ բնապահպանական խնդիրներ.
- կլիմայի գլոբալ տաքացում (ջերմոցային էֆեկտ),
- օզոնի շերտի քայքայում,

- օդի աղտոտվածություն (ներառյալ թթվային տեղումների խնդիրը),
- համաշխարհային օվկիանոսի աղտոտումը,
- կենսաբազմազանության նվազեցում (ներառյալ անտառների ոչնչացումը):
Բարձր բժշկական ռիսկի խնդիրներ.
- թունավոր նյութերով օդի աղտոտում.
- խմելու ջրի որակը.
- վտանգավոր թափոնների աղբավայրերի շահագործում.
- փոփոխված գենետիկական կառուցվածքով օրգանիզմներ¹:

Յուրաքանչյուր պետություն իր քաղաքականության կարևոր մասերից մեկը պետք է դարձնի բնապահպանական բոլոր խնդիրների վերհանումն ու դրանց համարժեք լուծումների առաջադրումը, ինչպես նաև սեփական քաղաքացիների շրջանում բնապահպանության մշակույթի ձևավորումը: Ինչը բարդ և երկարատև գործընթաց է, սակայն դրա իրագործումը կարող է լուծել անհնարին թվացող խնդիրներ:

Բնության և բնական ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվում նաև Հայաստանում:

Հայաստանում բնօգտագործման և բնապահպանական հարցերը կարգավորում է պետությունը. ՀՀ ԱԺ-ն իր ընդունած օրենքներից բացի վավերացնելով համապատասխան համաձայնագրեր, միանում է դրանց և պատասխանատվություն ստանձնում երկրում այդ համաձայնագրերի պահանջների իրականացման համար:

Երևանում և խոշոր քաղաքներում կառուցվում են աղտոտված ջրերի մաքրման կայաններ, ռոռզվում և չորացվում են նոր հողատարածքներ, կառուցվում են ջրամբարներ, սահմանափակվել է անտառահատումը:

¹ Բնապահպանական խնդիրը որպես մարդկության գլոբալ խնդիր: Մոլդրակի բնապահպանական խնդիրները, հղումը՝ <https://vbgj.ru/hy/temperature/ekologicheskaya-problema-kak-globalnaya-problema-chelovechestva-ekologicheskije-problemy-planety-global/>

Արգելված է որոշ կենդանիների և թռչունների, ինչպես նաև Սևանի իշխանի որսը: Սևանի ազգային պարկի կազմակերպումը, ինչպես նաև Արփա և այլ գետերի ջրերի տեղփոխումը Սևան, ստեղծում են բոլոր հնարավորությունները, որպեսզի առայժմ պահպանվի իսկ ապագայում նաև բարձրացվի Սևանի ջրի մակարդակը: Կազմակերպվում են ազգային պարկեր, արգելանոցներ և արգելավայրեր: Կառուցվում են ջրի մաքրման կայաններ, գործարաններում տեղադրվում են օդի մաքրման, գազ ու փոշի կլանող սարքավորումներ, ներդրվում է անթափոն արտադրության տեխնոլոգիան, հսկողություն է սահմանվում, որպեսզի բնական միջավայրում առողջության համար վնասակար նյութերի քանակը պահպանվի թույլատրելի սահմաններում:

Կենսաբազմազանության պահպանության նպատակով մշակվում է ՀՀ կենսաբազմազանության պահպանության ռազմավարություն, որը խիստ բազմակողմանի ու ծավալուն փաստաթուղթ է, որի մեջ ներառող խնդիրներից մեկն էլ բնապահպանական կրթության ու գիտության զարգացման հարցն է:

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՊՐՈՑԸ

2.1 Բնապահպանական դաստիարակությունը և կրթության դպրոցում

Բնապահպանական խնդիրների լուծման հարցում կարևոր նշանակություն ունի մարդկանց մեջ բնության պահպանության կարևորության մշակույթի ձևավորումը, ինչպես նաև այդ հարցում պատրաստակամություն ստանձնելու ունակությունը: Առկա հիմնախնդիրները մեծ չափով կարող են նվազել այն դեպքում, երբ մարդկության մեջ ձևավորվի բնությունը սիրելու, պահպանելու մշակույթ: Կարևոր է կոնկրետ քայլեր ձեռնարկել այդ մշակույթի ձևավորման համար: Իսկ ո՞րն է դրա լավագույն ճանապարհը, եթե ոչ դպրոցն ու կրթությունը:

Բնապահպանական հիմնական խնդիրների դիտարկումը դպրոցում իրենից մեծ կարևորություն է ներկայացնում:

Իրականում հասարակության յուրաքանչյուր անդամ կրթվում, դաստիարակվում, ձևավորվում է հենց դպրոցում, ուստի միայն դպրոցում է հնարավոր անձի մոտ ձևավորել այն հիմնական գաղափարներն ու արժեքները, որոնք հնարավորություն կտան խուսափելու մի շարք գլոբալ խնդիրներից, ինչպիսին բնապահպանական խնդիրներն են: Վերոգրյալ նկատառումներից ելնելով միանշանակ գտնում ենք, որ բնապահպանության հիմնախնդիրների դիտարկումը դպրոցում իրենից մեծ կարևորություն է ներկայացնում: Այս առումով մեր կողմից կատարված ուսումնասիրությունների շրջանակներում բավականին ուրախալի էր նկատել պետության քաղաքականության հիմնական ուղղություններն ու դրանց արդյունքում կայացված որոշումները: Մասնավորապես՝ առկա է 2010 թվականի նոյեմբերի 25-ի ՀՀ Կառավարության որոշում Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին²:

2. <https://www.arlis.am/>

Բնապահպանական կրթության նպատակն է .

- կիրառել տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակելով բնապահպանական գիտելիքներով գրագետ և ազնվաբարո մարդ,
- ամրապնդել կրթական գործընթացները, որոնք թույլ են տալիս մշակել արժեքներ, դրական վերաբերմունք և պատասխանատու քաղաքացիներ շրջակա միջավայրի նկատմամբ:

Բնապահպանական կրթության գլխավոր խնդիրը շրջակա միջավայրի բնապահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է: Իրազեկության տեսանկյունից թիրախային խմբերը բազմազան են: Այս տեսանկյունից ամենակարևոր խմբերը երեխաներն են, քանի որ նրանք են հանդիսանում երկրի ապագան կերտողները:

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Բնապահպանական կրթության կազմակերպման յուրաքանչյուր ձև զարգացնում է տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ:

Բնապահպանական տարբեր թեմաների անդրադառնալու միջավայր են հանդիսանում տարրական և միջնկարգ դպրոցները:

Յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունն պետք է դարձնի իր պարտականությունը: Շրջակա միջավայրի պահպանությանը իրենց գործուն մասնակցությունը պիտի ունենան՝ ընտանիքը, դպրոցը, ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակություն:

Որպես բնապահպանական կրթության արդյունավետ ուսուցման կարևոր մեթոդ համարում ենք դասարանային պարապմունքներին զուգահեռ կրթական միջոցառումների, էքսկուրսիաների, ճամբարների, դպրոցական խմբակների, շաբաթօրյակների, ծառատունկի և այլնի կազմակերպումը: Էքսկուրսիաների դերը կարևորվում է նրանով, որ աշակերտները ամրապնդելով ստացած տեսական գիտելիքները՝ ձեռք են բերում նաև գործնական կարողություններ և

հմտություններ:

Ուսումնական գործընթացում աշակերտներին պետք է ծանոթացնել առկա բնապահպանական խնդիրներին, նրանց լուծման համար առաջադրվող գիտական հնարավոր ձևերին:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկան ուսումնասիրելիս արդեն աշակերտի մոտ հասակ ձևավորվում է պատկերացում և կապ հասարակության և բնության միջև, որը մի ամբողջություն է, և ինքը՝ աշակերտը այդ ամբողջության մի մասնիկն է: Դա հնարավորություն է տալիս երեխային վաղ հասակից պատկերացում ունենալ շրջակա միջավայրի մասին: Տարբեր խաղերի, մրցույթների, նախագծերի օգնությամբ երեխաներին կարելի է ընդգրկել բնապահպանական տարբեր միջոցառումների մեջ, որոնք կվերաբերվեն իրենց դպրոցին, բակին կամ համայնքին: Այդ դեպքում աշակերտները իրենց ավելի վստահ կզգան, որպես հասարակության կարևոր անդամ:

Կան նաև բնապահպանական խնդիրներին առնչվող վավերագրական կլինոնկարներ, որոնց դիտումը նույնպես նպաստում է աշակերտների բնապահպանական կրթությանը:

Վերոգրյալ բոլոր խնդիրների, նպատակների, գաղափարների ու սկզբունքների համալիր ուսումնասիրման արդյունքում կարող ենք նշել, որ բոլոր քայլերն ու միջացառումները հանգում են կայուն զարգացման երաշխավորմանն ու ամրապնդմանը, ինչը բխում է նաև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված սահմանադրական կարգավորումից: Ստացվում է, որ պետության, ազգի, հասարակության համար ամենից կարևոր հարցը՝ կայուն զարգացումը, անմիջականորեն կախված է բնապահպանությունից, ուստի միայն բնապահպանական ճիշտ և գրագետ միջոցառումների իրականացման շնորհիվ է հնարավոր ապահովել կայուն զարգացում:

2.2 Բնապահպանական հիմնախնդիրների լուծման ուղիները <<Քիմիա>> առարկայի շրջանակներում

Բնապահպանության առկա իրավիճակը ստեղծվել է ժողովրդական լայն շերտերի բնապահպանական գիտելիքների պակասի հետևանքով: Այս կարևորագույն խնդրի լուծման ուղիներից մեկը քիմիայի դասաժամերին սովորողների բնապահպանական դաստիարակության իրականացումն է, որի հիմքում ընկած է քիմիական միացությունների կազմը, կառուցվածքը, նյութերի հատկությունները և նրանց կենսաբանական գործառնությունները, անկենդան և կենդանի բնության երկակի դերը, ինչպես նաև կենդանի օրգանիզմների համար քիմիական տարրերի կենսաբանական դերը:

Քիմիան, ուսումնասիրելով նյութերի բաղադրությունը և կառուցվածքը, կարողանում է պատասխանել այն հարցերին, թե ի՞նչ է տեղի ունենում նրանց հետ մթնոլորտում, հողում, ջրային միջավայրում, ի՞նչ ազդեցություն ունի նյութը և նրա փոփոխված արգասիքները կենդանի օրգանիզմում:

Քիմիայի ուսուցչի խնդիրն է.

- բացատրել օրգանական և անօրգանական աշխարհի միասնությունը, բնության մեջ ընթացող շրջանաձև գործընթացների քիմիական օրինաչափությունների վրա անտրոպոգեն գործոնի ազդեցության առանձնահատկությունները և սրանց հիման վրա էլ ձևավորել խնամք բնության հանդեպ,
- բացատրել բնության հանդեպ քիմիական արդյունաբերության երկակի դերը,
- սովորողներին զինել գործնական գիտելիքներով և հմտություններով, որոնք թույլ կտան մասնակցել բնապահպանական միջոցառումներին:

Քիմիայի դասաժամերին բնապահպանական դաստիարակությունը ճիշտ և նատակային կազմակերպելու համար նպատակահարմար է որոշ թեմաներում

անդրադառնալ բնապահպանական բնույթի հարցերի: Օրինակ՝

1. <<Թթուներ>> թեման անցնելիս, անդրադառնալ թթվային անձրևներին, նշել առաջացման պատճառները, հետևանքները և կանխարգելման ուղիները:
2. <<Ածխածնի օքսիդները>> անցնելիս անդրադառնալ ջերմոցային էֆեկտին, շնու գազի թունավորման հետևանքներին:
3. <<Ջուր, լուծույթներ>> թեմայում անդրադառնալ բնական ջրերի քիմիական բաղադրությանը, ջրային աղբյուրների աղտոտմանը և ջրի մաքրման աշխատանքներին:

Սովորողների բնապահպանական մշակույթի մշակման համար, ուսումնական գործընթացից բացի, կարևոր են նաև արտադասարանային և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Բնապահպանական դաստիարակությունը սկսվում է <<Քիմիա>> առարկայի առաջին դասերից, երբ ուսումնասիրում են <<Անվտանգության կանոնները քիմիայի լաբորատորիայում>> թեման: Աշակերտները պետք է գիտակցեն և հասկանան, որ յուրաքանչյուր լաբորատոր փորձից հետո ստացված նյութերը պետք է ոչնչացնել, կամ պիտակավորել և պահեն հետագայում օգտագործելու համար:

Բնապահպանական դաստիարակությունը զարգացնելու համար կարելի է հանձնարարել բնապահպանական բնույթի խնդիրներ: Հնարավորության դեպքում կարելի է կազմակերպել էքսկուրսիա մոտակա արդյունաբերական ձեռնարկություն:

<<Քիմիա>> առարկայի շրջանակներում բնապահպանական դաստիարակությունն ամրապնդելու նպատակով կարելի է հանձնարարել հետազոտական աշխատանքներ, ռեֆերատներ, շարադրություններ: Նշված աշխատանքների շնորհիվ աշակերտների մեջ դաստիարակվում է դիրքորոշում, պատասխանատվություն մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

Ինչպես արդեն նշեցինք, կայուն զարգացումը կախված է հենց բնապահպանությունից, այսինքն՝ որքան առողջ և բարեկարգ է շրջակա միջավայրը, այնքան երաշխավորված է կայուն զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության արդյունքներից և ներկայացված տեսակետներից՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

- Առաջընթաց և կայուն զարգացումը յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից մեկն է, որին հասնելու գլխավոր երաշխիքը շրջակա միջավայրի պահպանությունն է:
- Բնապահպանական խնդիրները դասվում են արդի դարաշրջանի հրատապ հարցերի թվին, որոնց լուծման համար առաջադրվում են միջոցառումներ ու մեխանիզմներ:
- Բնապահպանական խնդիրների լուծման հարցում կարևորվում է բնապահպանական կրթությունը, որի գլխավոր խնդիրը շրջակա միջավայրի բնապահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է և հասարակության անդամների մեջ բնության և շրջակա միջավայրի պահպանության հարցում պատասխանատվության զգացումի առկայությունը:
- Բնապահպանական հիմնախնդիրների հաղթահարման հարցում մեծ նշանակություն ունի բնապահպանական գիտակցության ձևավորումը, որը դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկն է:
- Յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի, որ պարտավոր է հոգ տանել բնության մասին, քանի որ միայն միասին կարող ենք էական ներդրում ունենալ շրջակա միջավայրի պահպանության գործում և խուսափել բնապահպանական աղետից:
- Այսինքն՝ քիմիայի դասընթացի գլխավոր նպատակը ոչ միայն քիմիա սովորեցնելն է, այլ նաև քիմիան ուսումնասիրելու միջոցով աշակերտի ունակությունների զարգացումը՝ դեպի բնապահպանությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Առաջարկում ենք <<Քիմիա>> առարկայի ուսուցման շրջանակներում աշակերտների մոտ զարգացնել հետազոտողի կարողություններ, սեփական և ուրիշի դատողություններին քննադատաբար վերաբերվելու, դասարանում աշխատելու ունակություններ, դաստիարակել հարգանք մարդկանց, բնության, մշակութային արժեքների նկատմամբ,
- Առաջարկում ենք զարգացնել սովորողի նպատակաուղղվածությունը, հանդուրժողականությունը, սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ, ձևավորել ինքուրույն աշխատելու, բնությանը հաղորդակցվելու համագործակցելու մշակույթ:
- Առաջարկում ենք քննարկումներ ուսուցչի և աշակերտի միջև բնապահպանական խնդիրների և դրանց լուծման մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ, և աշակերտներից ստանալ առաջարկներ բնապահպանական առկա խնդիրների լուծման առումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բնապահպանական խնդիրը որպես մարդկության գլոբալ խնդիր: Մոլորակի բնապահպանական խնդիրները, հղումը՝ <https://vbgi.ru/hy/temperature/ekologicheskaya-problema-kak-globalnaya-problema-chelovechestva-ekologicheskie-problemy-planety-global/>
2. ՀՀ Կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/>
3. Լ.Վ.Հարությունյան, Է.Մ Հայրապետյան <<Բնության պահպանության հիմունքներ>> Երևան, 1983թ.,
4. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ, Երևան, 2010թ.,
5. Иноземцева Е.В. Педагогика, экономическое воспитание на уроках химии//
6. Համացանց